ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳ

1. Էլեկտրաէներգիայի մատակարար պայմանագիր կնքել ցանկացող սպառողները պետք է իրենց մտադրության մասին գրավոր կամ բանավոր հայտնեն «Մանանա Գրեյն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Մատակարար)՝ ներկայացնելով իրենց Ընկերության տեխնիկական տվյալները՝ սպառողի անվանումը, լարման պատկանելիությունը, սպառման տարեկան մոտավոր քանակությունը, սպառման սեզոնայնությունը, մատակարարման ժամանակահատվածը, հաշվիչի տեսակը, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության հետ կնքված պայմանագիրը և կոնտակտային տվյալներ: Սպառողը պարտավոր է տեղեկացնել նաև արևային ֆոտովոլտային կայան ունենալու փաստի և/կամ տեղադրելու մտադրության մասին տեղեկատվություն:
2. Մատակարարը սպառողին տեղեկացնում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության հետ կնքված մատակարարման պայմանգրից հրաժարվելու հետևանքների մասին, ինչպես նաև՝ արևային ֆոտովոլտային կայանի հաշվառման կարգի փոփոխության մասին (առկայության դեպքում):
3. Վերոնշյալ տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում Մատակարարը կազմում և սպառողին է ներկայացնում գնային առաջարկ:
4. Գնային առաջարկն ընդունելու դեպքում սպառողը իր սպառման հաշվառման համակարգը բերում է մեծածախ շուկայի կանոններով նախատեսված ընդունելի վիճակի:
5. Համապատասխան փաստաթղթերը ներկայացնելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում սպառողը ներառվում է Մատակարարի խմբում որպես սպառող և մեկնարկում է էլեկտրաէներգիայի մատակարարումը:
6. Էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագրի գործողության ընթացքում վճարումների ուշացման կամ չկատարման դեպքում դադարեցվում է էլեկտրաէներգիայի մատակարարումը:

7. Էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագրի գործողության ընթացքում առաջացած հարցերի/բողոքների կամ հաշվառման համակարգի փոփոխության դեպքում սպառողը դիմում է Մատակարարին՝ գրավոր նամակ ուղարկելով վերջինիս կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին: Անհապաղ հարցերի դեպքում սպառողը կարող է կապ հաստատել աշխատանքային օրերին՝ ժամը 09:00-18:00, զանգահարելով կայքում նշված հեռախոսահամարին կամ Մատակարարի կողմից տրամադրված այլ հեռախոսահամարին:
8. Բողոքների մասով Մատակարարի կողմից պատասխանը կամ պարզաբանումը տրվում է 5 աշխատանքային օրվա ընթացքում: